

Δημιουργήματα ἀνέκδοτων ἀλλοτρίων τοῦ 19^{ου} αἰῶνος. Ἐκδόσεως ὑπο
 Θεοδώρου Παπαδοπούλου. Δημοσιεύματα τοῦ Κέντρου Ἑπιστημονικῶν
 Ἑρευνῶν τομῆς V, Λευκωσία, 1975. XVII+375 σελ.

(«Գիտական հետազոտությունների կենտրոնի հրապարակումներ, հ. Ծ. Կիպրական ժողովրդական երգեր XIX դարի անտիպ ժողովածուներից», աշ-
 խատասիրությամբ Թ. Պապադոպուլոսի, Նիկոզիա, 1975, XVII+375 էջ):

Թ. Պապադոպուլոսը հիշյալ գրքում հրատարակել է կիպրական ժողովրդական պոեզիայի
 ամենակարևոր ժողովածուներից երկուսը, որոնք մինչ այդ հայտնի չէին գիտությանը՝ ժողո-
 վածուներից առաջինը պատկանում է նիկոմիդացի խրիստոս Պապադոպուլոսին, որի խորա-
 գիրն է. «Ժողովածու կիպրական ժողովրդական երգերի՝ հավաքված հենց ժողովրդի բերանից
 և. Պապադոպուլոսի (դատավոր Կիպրոսում) կողմից. 1889 թ. հուլիսի 1-ը երկրորդ ժողովածուն
 կազմել է ուսուցիչ Գեորգիոս Լուկասը (1843—1925)»:

Թ. Պապադոպուլոսը իր գրքի առաջարանում տալիս է այդ ժողովածուների ստեղծման հա-
 մառոտ պատմությունը, արժեքավորում կիպրական բանահյուսության մեջ դրանց գրաված
 տեղը, խոսում հունարեն լեզվի կիպրական բարբառի առանձնահատկությունների, տառադար-
 ձության մասին և այլն:

Բուն հրատարակությունը բաժանված է երկու մասի՝ խրիստոս Պապադոպուլոսի ժողովա-
 ծու (29 երգ) և Նեոքիզոս Լուկասի ժողովածու (42 երգ): Բովանդակության առումով հրատա-
 րակիչը երգերը բաժանել է մի քանի ենթաբաժինների՝ հոգևոր, պատմական, ակրիտական
 (Դիգենիա Ակրիտաս էպիկական հերոսին նվիրված), զրուցադատումներ, բանաստեղծական,
 քնարական, երգիծական, Էրկտոդ ոտանավորներ:

Բոլոր երգերն էլ հիշյալ բնագավառների ուսումնասիրողների համար որոշակի հե-
 տաքրորություն են ներկայացնում, իսկ հունարեն լեզվի կիպրական բարբառի, ինչպես և կիպ-
 րացիների բանահյուսության համար ունեն առանձնահատուկ նշանակություն:

XIX դ. գրի առնված լինելը դեռ չի նշանակում, որ երգերը ստեղծվել են այդ ժամանա-
 կաշրջանում: Շատերը գալիս են միջնադարից: Դրանցից են բյուզանդական «Իդիենիա Ակրի-
 տաս» էպոսի հերոսներին վերաբերող երգերը: Կան երգեր, որոնք հորինվել են որոշակի դիպ-
 քերի առնչությամբ՝ Օսմանյան կայսրության թարգման հաջի Յորդակիսի մասին (սպանված
 1804 թ. Վոստանդեուպոլսում), 1821 թ. Կիպրոսի Բարձրագույն հոգևորականների և մեծամեծ-
 ների գլխամասն, 1852 թ. նավարկության զոհ գնացած ուխտավորների մասին և այլն: Մեղ
 համար հետաքրքրական են Դիգենիա Ակրիտասի ցիկլին վերաբերող երգերը, ինչպես նաև
 Վասիլ Ի կայսեր (976—1025) դեմ ապստամբություն բարձրացրած հայազգի զորավարների
 (Վարդապ Փոկաս, Նիկեիոր Մովիդ) նվիրվածները: խրիստոս Պապադոպուլոսի ժողովածուի
 16-րդ գոգարիկ երգը, որի հերոսը հայ է, բերում ենք ստորև տողացի թարգմանությամբ:

ՀԱՅ Ի ԵՐԳԸ

Մի հայուրդի հայ աղաչում է Խնձուրենուն.

«Իմ Խնձուրենի, ծոխ կատաղ, ծոխ նյուղերդ.

սլաոկեմ, Բնեմ Բո ծոցում»:

«Ինչպե՞ս ծոն կատաղս, ինչպե՞ս ծոն նյուղերս.

որ սլաոկես, Բնես իմ ծոցում»:

սս ծովային ամուսին ունեմ, որ դուրս է նկել ծով.

երկար ժամանակ է, ինչ գնացել է, շատով կգա՞.
 Ուրբաթ օրն էր նրան համոզում, շաբաթ օրը՝ չէ.
 կիրակի առավոտյան ծովայինն իմացավ:
 Երկուշաբթի սև օրը բոլորին գատի կանչեցին:
 Առջևից ծովայինն էր դնում՝ բուրբ դատավորիս!,
 որ դատում է բուրբ ու հոռոմ արևելից արևմուտք,
 ապա դալիս է կինը՝ հանց բառամած խնձոր,
 ապա՝ հայր, հանց հասած խնձոր:
 Ծովայինը դիմում է կնոջն ու ասում.
 «Քեյն, անօրեն քած, քեյն լիբր քած,
 դստն՝ դատավորի մոտ հաշդ ելեմ,
 ի՞նչ փույթ եթե քեզ կորցնեմ էլ»:
 Հայր դիմում է սիրունուն ու ասում.
 «Քեյն, կարմիր խնձոր, քեյն, վարդ խնձոր,
 զնանք դատավորի մոտ, ես քեզ կվերկեմ,
 հազար կտամ մտնելուդ պահին, հազար՝ գործիդ համար,
 մի ոսկի սինի էլ՝ քեյլիդ»:
 Նախ ծովայինն է մանում բուրբ դատավորի մոտ.
 «Ողջո՛ւյն քեզ, ողջո՛ւյն, արեա, Թուրքիայի դատավոր,
 որ դատում ես բուրբ ու հոռոմ արևելից արևմուտք,
 հասար տարի ապրած մեա բոյդ ջանել,
 գլխիդ մազին բան չպատանի:
 Իմ պարտեզում մի խնձորենի բուսավ,
 բայց ինչ անցորդ գա՝ մոտից,
 քե հեռվից, մտնում պտուղ է քաղում»:
 Այնուհետև հայն է մտնում բուրբ դատավորի մոտ.
 «Ողջո՛ւյն քեզ, ողջո՛ւյն, արեա, Թուրքիայի դատավոր,
 որ դատում ես բուրբ ու հոռոմ, արևելից արևմուտք,
 գլխիդ մազին բան չպատանի,
 հազար տարի ապրած մեա բոյդ ջանել:
 Եթե կա մի հովասուն պարտեզ, բայց առանց պարտիզպանի,
 ինչ անցորդ էլ գա, պիտի մանի, պտուղ քաղի,
 հեռվից եկողն էլ մեղերը պիտի հավաքի»:
 սա տեղն ու տեղը հազար ոխալ փող տվեց ու լսեց.
 «Կինը քո՛նն է, հայ, բող քոնը լինի,
 քեկուդ և մի ամբողջ լաշխարհ»:

ՀՐԱԶ ԲԱՐԹԻԿՅԱՆ

Պատմական գիտությունների դոկտոր